<< ՀՀ Արարատի մարզի Նոր Կյանքի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Հաստատում եմ՝
Տնօրեն՝ ---------- Կ. Հարությունյան

Digitally signed by HARUTYUNYAN KARINE 7408840632
Date: 2023.09.29 15:17:07 GMT+04:00

Երաշխավորում եմ
ՄԿԱԳՏ/Տ՝ ----------/ Ն. Հարությունյան/

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ
2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

Դասղեկ՝ Ք.Աբրահամյան
Դասարան՝ 2-րդ

ԴԱՍՂԵԿԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Դասարանի ղեկավարը (այսուհետ՝ դասղեկ), իսկ տարրական դպրոցում՝ դասվարը՝

1) դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում, հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) և դրա մասին մեկօրյա ժամկետում տեղեկացնում է դպրոցի տնօրենին՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.

2) մասնակցում է իր ղեկավարած դասարանում սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և մանկավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը.

3) նպաստում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը.

4) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.

5) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները, դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.

6) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.

7) դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը:

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) Դասարանը բաղկացած է 24 սովորողներից: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են, ձևավորված է աշակերտական կոլեկտիվ: Դասարանը ունի ավանդույթներ,ակտիվ են ներդպրոցական կյանքում:Երեխաները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին,պահպանում են դպրոցի ներքին կարգապահական կանոնները :

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում:Աշխատանքները բխում են դպրոցի զարգացման ծրագրից,աշխատանքային տարեկան պլանից : Դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ,զրուցել ծնողների հետ դաստիարակչական ընդհանուր հարցերի շուրջ, որոնք կնպաստեն աշակերտների օրինակելի վարքագծի ձևավորմանը,գիտելիքների ձեռքբերմանը,կարողությունների հմտությունների զարգացմանը: Առաջադիմությամբ ցածր և/կամ/ դժվար աշակերտների հետ աշխատել առանձին , որպեսզի հաղթահարեն դժվարությունները: Դիտարկել սովորողների կրթության առանձ-նահատուկ պայմանների կարիքը մասնագիտական աջակցող խմբի հետ:

Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ և գծեր՝ հայրենասիրություն,կարգապահություն,հանդուրժողականություն, մաքրություն, անձնական հիգիենա, համագործակցություն, փոխօգնություն, խաղաղության մշակույթ :

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն Ցուցադրել և բացատրել, թե գեղեցիկը ի՞նչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ՝դասղեկական դասերը հագեցնելով արվեստի գործերով,երաժշտականությամբ,էսթետիկ զրույցներով:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Մշտապես հիշեցնել մեր հերոսների անունները և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը , խոսել ռազմարվեստի մասին:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն Դասապրոցեսին պետք է ցուցաբերող ակտիվություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը,կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և առողջ ապրելակերպի,սննդակարգի միջոցով:

3.5 Աշխատանքային դաստիարակություն Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:

3.6 Բնապահպանական դաստիարակություն Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում և որ այդ խնդիրը գլոբալ է և բոլորինս է,պետք է սովորեցնել պահպանել մաքրություն,չաղտոտել բնությունը,շրջակայքը :

4. Դպրոց-ընտանիք կապը Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ պետք է սերտ լինի դպրոց - ընտանիք կապը, որպեսի աշակերտները ավելի լավ կրթվեն:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	կատարման ժամկետը	Կատարողներ
I	Զրույց՝«Քո աշխատանքը սովորելն է»: Դաստիարակել սեր ուսման և դպրոցի հանդեպ:	01.09.23թ.	աշակերտ դասղեկ ՄԿԱ գծով տն.տեղակա
II	Համավարակի կանխարգելման դեմ շարունակականություն: Ծանոթացնել համավարակից պաշտպանվելու կանոններին:	09.09.23թ.	աշակերտ դասղեկ
III	Զրույց՝« Ի՞նչ է անկախությունը »: Սերմանել հայրենասիրություն:	16.09.23թ.	աշակերտ դասղեկ
IV	Խնդիրների համատեղ լուծում, որոշումների կայացում: «Պարողը»: Կարևորել համագործակցությունը,պատասխանատվությունը	23.09.23թ.	աշակերտ դասղեկ
V	Հանդուրժողականություն՝«Վարակիչ Քուչոն » զրույցը հնարավորություն կտա ձևավորել հանդուրժողականություն,	30.09.23թ.	աշակերտ դասղեկ

	հարգանք դիմացինի նկատմամբ:		
VI	Զրույց՝ «Թարգմանչաց տոն» թեմայով Ծանոթացնել հայ դպրությանը և մշակույթին:	07.10.23թ.	աշակերտ դասղեկ
VII	Մասնակցություն, ակտիվ քաղաքացիական դիրքորոշում «Որ լույս լինի»:Սեփական կարծիք, դիրքորոշում ունենալու կարևորության զարգացում <<	14..10.23թ.	աշակերտ դասղե
VIII	Զրույց՝ «Գրքի ձակատագիրը » թեմայով: Զրուցել գրքի կարևորության և դերի մասին:	21.10.23թ.	աշակերտ դասղեկ
IX	Զրույց՝ «Քո ընկերը » թեմայով:Դասարանում ստեղծել վստահության մթնոլորտ:	04.11.23թ.	աշակերտ դասղեկ
X	Կոնֆլիկտների հաղթահարում «Արի հաշտվենք»: Պատմվածքի միջոցով նպաստել կոնֆլիկտների հեշտ հաղթահարմանը:	11.11.23թ.	աշակերտ դասղեկ
XI	Շրջակա միջավայր «Աղբն ո՞վ թափեց»: օգնել սովորողներին գիտակցելու աղբի և թափոնների վնասակար ազդեցությանը բնության և մարդու առողջության վրա	18.11.23թ.	աշակերտ դասղեկ
XII	Զրույց՝ «Ես առանձնահատուկ եմ » թեմայով: Սերմանել հարգանք սեփական անձի և դիմացինի նկատմամբ:	25.11.23թ.	աշակերտ դասղեկ
XIII	Զրույց՝ «Երկրաշարժը և դրա հետևանքները » թեմայով: Ներկայացնել բնական աղետների առաջա ցման պատճառները և դրանց հետևանքն երը:	02.12.23թ.	աշակերտ դասղեկ
XIV	Զրույց՝ «Պաշտպանական միջոցները, օգտվելու կանոնները » թեմայով:Զրուցել երկրաշարժի և դրա ժամանակ պաշտպանական քայլերի մասին:	09.12.23թ.	աշակերտ դասղեկ
XV	Մրցույթ՝ «Ամենայուրահատուկ տոնածառը »: Կազմակերպել և անցկացնել մրցույթ, որը կզարգացնի սեր գեղեցիկի հանդեպ:	16.12.23թ.	աշակերտ դասղեկ
XVI	Ամանորյա ներկայացման դիտում:Միջմշակութային փոխըմբռնում՝ «Ա՛յ քեզ բան » :Կազմակերպել ամանորյա ներկայացման դիտում:	23.12.23թ.	աշակերտ դասղեկ
XVII	Փողոցներում և ճանապարհներին սովորողների վարքի հիմնական կանոնները	27.01.24թ.	աշակերտ դասղեկ

XVIII	Հետիոտնի տեղաշարժը փողոցներով,ճանապարհներով: Ճանապարհային երթ. Կանոնների պահպանումը՝ հետիոտների անվտանգության գրավականն է:	03.02.24թ.	աշակերտ դասղեկ հոգևոր հովիտ
XIX	Զրույց՝ «Մայրենիի օր »թեմայով:Կարևորել մայրենի լեզվի դերը:	10.02.24թ.	աշակերտ դասղեկ
XX	Զրույց՝ «Տիարնընդառաջ » թեմայով: Բանակցություններ «Կախարդական ծրարը »:Ծանոթացնել տոնի խորհրդին:	17.02.24թ.	աշակերտ դասղեկ
XXI	Երեխայի իրավունքները : ներկայացնել և ձևավորել իրենց իրավունքները : Թեմա՝«Գաղտնիքը »:	24.02.24թ.	աշակերտ դասղեկ
XXII	Փողոցների և ճանապարհների տարրերը: Ճանապարհային գծանշումը:Զրուցել փողոցների տարրերի՝ երթևեկելի մասի, մայթի մասին:	03.03.24թ.	աշակերտ դասղեկ
XXIII	Ճանապարհային երթ. կանոններ: Լուսացույցի և կարգավորողի ազդանշանները;Զարգացնել գիտելիքները լուսացույցի և նրա ազդանշանների նշանակության մասին:	10.03.24թ.	աշակերտ դասղեկ
XXIV	Արդյունավետ հաղորդակցում՝ « Ո՞վ է մեղավորը »:Կարևորել համագործակցության դերը մարդու կյանքում :	17.03.24թ.	աշակերտ դասղեկ
XXV	Ճանապարհային երթ. կանոններ: Փողոցներն ու ճանապարհներն անցնելու կանոնները:Բացատրել ճանապարհը թույլատրելի հատվածով անցնելու կարևորությունը:	24.03.24թ.	աշակերտ դասղեկ
XXVI	Ցերեկույթ՝ նվիրված մայրության և գեղեցկության տոնին:Տոնական ցերեկույթի նախապատրաստական աշխատանքների համակարգում:	07.04.24թ.	աշակերտ դասղեկ
XXVII	Ճանապարհային երթ. կանոններ: Խաչմերուկները և դրանց տեսակները: Տրանսպորտային միջոցների վարորդների ազդանշանները:Քննարկել խաչմերուկի ազդանշանների նշանակությունը հետիոտների համար:	14.04.24թ.	աշակերտ դասղեկ
XXVIII	Զրույց՝ «Սուրբ Զատիկ »թեմայով: Ծանոթացնել տոնի խորհրդին:	21.04.24թ.	աշակերտ դասղեկ
XXIX	Ճանապարհային երթ. կանոններ: Ճանապարհային նշաններ:Առաջին	28.04.24թ.	աշակերտ դասղեկ

	դասարանում յուրացրած ճանապարհային նշանների կրկնություն:		
XXX	Զրույց՝ «Մայիսը հաղթանակների ամիս է »թեմայով: Ծանոթացնել մայիսյան տոներին:	05.05.24թ.	աշակերտ դասղեկ
XXXI	Ճանապարհային երթ. կանոններ: Ուղևորների պարտականությունները: Հասարակական տրանսպորտ բարձրանալու, իջնելու կանոնների իմացության կարևորություն:	12.05.24թ.	աշակերտ դասղեկ
XXXII	Համագործակցություն՝ «Մեր բակի պատմությունը»: Տրանսպորտային միջոցներից իջնելիս փողոցն անցնելու կանոնները:	20.05.24թ.	աշակերտ դասղեկ
XXXIII	Տարեվերջյան էքսկուրսիա : Տարեվերջյան էքսկուրսիայի կազմակերպում և անցկացում :	24.05.24թ.	աշակերտ դասղեկ

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱ

Օր	Դասղեկի կողմից նախատեսված միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	ծանոթություն
04.09.23թ.	Զրույց՝«Քո աշխատանքը սովորելն է»	
11.09.23թ.	Համավարակի կանխարգելման դեմ շարունակականություն	
18.09.23թ.	Զրույց՝« Ի՞նչ է անկախությունը »	
25.09.23թ.	Խնդիրների համատեղ լուծում, որոշումների կայացում: «Պարողը »	
02.10.23թ.	Հանդուրժողականություն՝ «Վարակիչ Քուչոն »	
09.10.23թ.	Զրույց՝ «Թարգմանչաց տոն» թեմայով	
16.10.23թ.	Մասնակցություն, ակտիվ քաղաքացիական դիրքորոշում «Որ լույս լինի»	
30.10.23թ.	Զրույց՝ «Գրքի ձակատագիրը » թեմայով	

06.11.23թ.	Զրույց՝ «Քո ընկերը » թեմայով	
13.11.23թ.	Կոնֆլիկտների հաղթահարում «Արի հաշտվենք»	
20.11.23թ.	Շրջակա միջավայր «Աղբն ո՞վ թափեց»	
27.11.23թ.	Զրույց՝ «Ես առանձնահատուկ եմ » թեմայով	
0.12.23թ.	Զրույց՝ «Երկրաշարժը և դրա հետևանքները » թեմայով	
11.12.23թ.	Զրույց՝ «Պաշտպանական միջոցները, օգտվելու կանոնները » թեմայով	
18.12.23թ.	Մրցույթ՝ «Ամենայուրահատուկ տոնածառը »	
22.12.24թ.	Ամանորյա ներկայացման դիտում:Միջմշակութային փոխըմբռնում՝ «Ա՛յ քեզ բան »	
29.01.24թ.	Փողոցներում և ճանապարհներին սովորողների վարքի հիմնական կանոնները	
05.02.24թ.	Հետիոտնի տեղաշարժը փողոցներով,ճանապարհներով:	
12.02.24թ.	Զրույց՝ «Մայրենիի օր »թեմայով	
19.02.24թ.	Զրույց՝ «Տիարնընդառաջ » թեմայով: Բանակցություններ «Կախարդական ծրարը »:	
26.02.24թ.	Երեխայի իրավունքները : Թեմա՝ «Գաղտնիքը »	
04.03.24թ.	Փողոցների և ճանապարհների տարրերը: Ճանապարհային գծանշումը:	
11.03.24թ.	Ճանապարհային երթ. կանոններ: Լուսացույցի և կարգավորողի ազդանշանները;	
18.03.24թ.	Արդյունավետ հաղորդակցում՝ « Ո՞վ է մեղավորը »	
01.04.24թ.	Ճանապարհային երթ. կանոններ: Փողոցներն ու ճանապարհներն անցնելու կանոնները	
08.04.24թ.	Ցերեկույթ՝ նվիրված մայրության և գեղեցկության տոնին	
15.04.24թ.	Ճանապարհային երթ. կանոններ: Խաչմերուկները և դրանց տեսակները: Տրանսպորտային միջոցների վարորդների ազդանշանները	
22.04.24թ.	Զրույց՝ «Սուրբ Զատիկ »թեմայով	
29.04.24թ.	Ճանապարհային երթ. կանոններ: Ճանապարհային նշաններ	
06.05.24թ.	Զրույց՝ «Մայիսը հաղթանակների ամիս է »թեմայով	

13.05.24թ.	Ճանապարհային երթ. կանոններ: Ուղևորների պարտականությունները	
20.05.24թ.	Համագործակցություն՝ «Մեր բակի պատմությունը»: Տրանսպորտային միջոցներից իջնելիս փողոցն անցնելու կանոնները	

ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐՈՒՄ

Աշակերտի ազգանուն անուն	Խմբակ
Աբգարյան Ծիրանե	Պար,նկարչություն
Հակոբյան Սոս	Շախմատ
Մարգարյան Մայրանուշ	Պար,նկարչություն
Միրզոյան Ավետիս	Կարատե
Մկրտչյան Էլիզա	Պար,նկարչություն
Սարգսյան Մարի	Պար
Սարգսյան Ռիտա	Պար
Վարդանյան Ալեքս	Շախմատ,կարատե
Օհանյան Զարուհի	Պար

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄ

Նախագահ՝	Սարգսյան Նարինե
Անդամներ՝	1. Հարությունով Ծաղիկ 2. Միքայելյան Նարինե 3.Միրզոյան Գոհար